

**ԱՆՋԻԳՅԱՐ ՄԵՐ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք
(Լոռի), Լոռու բարձրագույն (խոսվածք)**

Ըլում ա, չի ըլում՝ մի հարուստ թգավորի կնիկ . ունենում ա մի իգիթ տղա: Ամեն օր տղեն գնալիս ա ըլում ֆորս: Եբ տուն ա գալիս ըլում բիզները, հետն աստծու անհատ բարին տուն ա բերում: Էսենց իգիթ տղեն ոտները ծղկակոլով մեղրաճանճի պես դուսավիտուն ա անում ու մոր հետը բախտով ապրում:

Շատ են ապրում, թե քիչ, էդ միայն աստոծ գիդե, մի օր թգավորի կնգա ըմարաթումը մի Ուշաբ ա փեյդահ ըլլում, գալիս ա դուզ թգավորի կնգա կուշտն ու ասում, որ ինքը նրան սիրում ա. թե որ թգավորի կնիկն էլ իրան սիրում ա, պսակվին ու մարդ ու կնգա պես ապրին:

Թգավորի կնիկը խոսք ա տալի, թե Ուշաբը բոյինն ունի մի հանքով նրա տղին սպանել .

Էնդուր որ տղեն չի ուզիլ, որ իր մերը մի Ուշաբի կնիկ ըլի: Ուշաբն ասում ա, որ դրա դեղը ինքը գիդե:

— Օխտը սարի քամակին մի բաղ կա,— ասում ա,— միջին մի խնձորի կա: Օխտը գլխանի ուշաբնի պիում են էդ բաղի դուռը: Էդ բաղը մտնողն էլ դուս չի գալիս: Դու սուտ հիվանդացիր ու տղիդ ասա, որ գնա Էն անմահական խնձորիցը քե հմար բերե: Նա կերթա, էլ էդ չի գալ: Բիզանը տղեն տուն ա գալիս ֆորսից, տենում ա, որ մերը տեղում հիվանդ ա:

— Ի՞նչդ ա ցավում, մե՛րա, ի՞նչ դեղ ես ուզում, որ անեմ,— հարցնում ա տղեն, Էնդուր որ նա իր մորը գլխիցն առավել էր սիրում:

Մերն ասում ա, թե որ նա Օխտը սարի քմակումը մի բաղ կա, Էն բաղի անմահական խնձորից մինը բերե, իրան ուտացնե, կսղանա, թե եբեր ո՛չ՝ պետք ա միանա:

Տղեն եգսի օրը իր քյահլան ձին թամբում ա, թուր ու դալխանը կապում, ձիուն օգանգու տալիս ու ծտի պես թռչում: Տղեն գնում ա, գնում, շատն ու քիչը աստոծ գիդե, ճամփին ռասս ա գալի մի թգավորական ըմարաթի: Տղեն ուզենալիս ա ըլում դուզ անց կենալ ամարաթի կշտովը, տենում ա մի հյուրի-մալաք ախչիկ Էնդի կանգնած, աչքը ճամփին կթած մտիկ ա անում: Ախչիկը հարցնում ա. — Բո՛ղ ձիավոր տղա, սո՛ւր թրավոր տղա, ճամփեդ բարի, ո՞ւր ես գնում:

Տղեն ասում ա. — Մերս հիվանդ ա, գնում եմ Օխտը սարի քմակի բաղիցը անմահական խնձոր բերեմ, որ նա ուտե, սղանա:

— Էդ ճամփեննի գնացողնին շատ են էլել, հմա էդ եկող՝ ոչ մինը: Արի՛ էդ ճամփիցը եդ կանգնի, պսակվինք ու միասին ապրինք:

— Դեռ հլա իր մոր փորիցն էլել չի Էն ախչիկը, որ մորս խոսքը գեղին գձել տա,— ասում ա տղեն, ձիուն օգանգու տալի ու անցկենում:

Շատ ա գնում, թե քիչ՝ հասնում ա Էն բաղին: Ձին դռանը կապում ա, մտնում բաղը, խնձորը պոկում ու դուս գալիս, ձի նստում ու դու ըլում:

Ծառ, քար, քոլ, ջուր, չիմ լիզու են ըլում ու կանչում. «Տարա՛վ, տարա՛վ, անմահական խնձորը տարա՛վ»:

Էդ ձենիցը քնած օխտը գլխանի ուշաբնին զարթնում են ու տղի եղնեն ընգնում . Էսենց ծիկ են տալի, որ նրանց ձենիցը սար ու ձոր ըրոտում են . «Է՛յ, է՛յ, կա՛նգնի, էդ ի՞նչ միլլեթ ես . դուշն իր թևովը, օձն իր պորտովը դեսը ոտք չի դնում, դու ո՞նց ես սիրտ անում մեր աթրափը կոխել»: Հմա տղեն ի՞նչ մտիկ կտա նրանց ձենին ու ծղրտոցին . ձին օգանգում ա ու ծտի պես թռչում տուն:

Ուշաբն ու մերը էնենց գիդէին, թէ տղեն էլ ետ գալու չի: Հրսանիք են սարքել ու քեփեր ին անում, օրեր անցկացնում: Դեռ մի օրավար հեռու էր, եք տղի թուր ու դալխանի շորը խկ շորը խկոցը ու ձիու ոտնաձենը մոր ընգաջին հասավ:

Մերն ասում ա Ուշաբին. — Տղես գալիս ա:

— Ի՞նչ ես ասում, տղիդ էնենց տեղ եմ դրկել, որ ուշաբնին վենձ թիքեն հմի ընգաջնին են թողել:

Չէ, եք տենում են, որ տղեն գալիս ա, Ուշաբը փախչում ա մերումը տապ անում, մերն էլ մտնում ա տեղն ու սուտանց տնքտնքում, մթամ թե հիվանդ ա: Անմհական խնձորիցն ուտում ա ու էգսի օրը լվանում:

Էգսի օրը տղեն ֆորսի ա գնում, իրիգունը մեղրաճանճի պես ոտքերը ծաղկակոլոլ տուն գալիս, տենում ա, որ մերը էլեդ հիվանդացել ա:

— Հմի՞ ինչդ ա ցավում, ա յ մերա, — հարցրուց իգիթը մորը, ինչ դեղ պտիմ ճարել, որ դու լվանաս, ասա՛, ես կենքս ու արես քե բադա կոնեմ, չունքլի դու սղանաս:

— Լավ էլ գիդեմ դեղը, հմա քե չեմ դիմիշ անում, որդիս, որ դրկեմ: Ասում են Օխտը սարի քմակումը մի Ջեյրան ա բաժում: Պոզերը ոսկի են, ոտներն՝ էրծաթ, պնչածակերիցը կրակ ա դուս թափվում: Թե որ էն Ջեյրանի կաթնիցը խմեմ, սղանամ:

Տղեն էգսի օրը թուր ու դալխանը կապում ա, ձի ըլում ու օգանգվում ձիուն, ծտի պես թռչում: Գնում ա գնում, շատն ու քիչը աստոճ գիտե, հասնում ա էն Հյուրի-մալաքի քոշկ ու սարահին¹:

— Բո՛ւ՛ զ ձիավոր տղա, սո՛ւր թրավոր տղա, — կանչում ա Հյուրի-Մալաքը, — Ճամփեդ բարի, ո՞ւր ես գնում:

Տղեն ասում ա. — Մերս հիվանդ ա, գնում եմ Օխտը սարի քմակիցը Ջեյրանի կաթը բերեմ, որ մերս խմե, սղանա:

— Էդ ճամփենի գնացողնի շատ են էլել, հմա եդ եկող՝ ոչ մինը: Արի՛, էդ ճամփիցը եդ կանգնի, պսակվինք ու միասին ապրինք:

— Դեռ հլա իր մոր փորիցը էլել չի էն ախչիկը, որ մորս խոսքը գեղին գձել տա, — ասում ա տղեն, — ձիուն օգանգու տալի ու անցկենում:

Շատ ա գնում, թե քիչ՝ հասնում ա Օխտը սարերին: Կենդ-կենդ անց ա կենում սարերը, հմա քանի գնում ա, սարերը մթնում են. եք հասնում ա վրա Օխտը սարին, աշխարքը նրա ըղաքին մթնում ա: Էնենց մթնում են սար ու ձոր, որ ես մութն ասեմ, դու գիշեր իմացիր, ես գշեր ասեմ, դու դժոխք իմացիր, մի խոսքով, էն դայդի ակնակիր գշեր, որ մատդ աչքը կոխեիր, մարդ տենուլ չէր: Քամին ր վշշացնում չի՛, ծառեր են՝ որ գեղնի հետ դգվում են: Ամպն ու չանգը գեղինն առել են. ծովինարը էնենց խաղում, որ կասես թե ուզում ա աշխարքը կրակ տա:

Հմա տղեն, որ ասես, այնումը չի գձում, աչքը Ջեյրանն ա արել ու ձին քշում: Եք անց ա կենում վրա Օխտը սարը, ամպն ու չանգը պատռում են, մի էն դայդի չայիր ու չիման դուզ ա էրևում, որ կասես՝ ոնչ ուտեմ, ոնչ խմեմ, օր ու գշեր էդ դգին մտիկ անեմ: Հենց էդ դգումը բաժեղիս ա ըլում Ջեյրանը:

Ջեյրանը որ տղին տենում ա, սիրտը խաղ ա ըլում, էնդուր որ ֆորսը իրան ոտովն ա գալիս նրա կուշտը: Ջեյրանն ուզում ա տղի վրա վրապրծնու, հմա տղեն որ ձիու սանձքը բոշ ա անում ու Ջեյրանին նի գալիս, խեղճը տենում ա, որ չէ, սա իր աստամի օքմին չի, պոկին ա տալի: Նա վագում ա՝ տղեն եղնեն, նա վագում ա՝ տղեն եղնեն, նա վագում ա՝ տղեն եղնեն, հեչվելը գնում ա, որ լիթոնն ընգնում ա, էլ կարում չի ոտը ոտի աղաքը դնե: Ջեյրանը կանգնում ա ու սկսում լիգու ածել:

1 Բնագրում տպագրված է՝ սահարին, հավանաբար վրիպակ է—Ծ. Կ.:

— Ա՛յ բո՛գ ձիվավոր տղա, սո՛ւր թրավոր տղա, վերեն աստոծ, ներքևը՝ դու. ես մեր եմ, ֆորթս տանը ճամփա ա պիտում. ինձ դիմիշ մի՛ անել, կենքս ինձ մի՛ բաշխե, իմ ֆորթին բաշխե, կաթն ես ուզում՝ արի՛, չոքիմ, կթե, տար:

Էս ասելու հետ՝ Ջեյրանը չոքում ա: Տղեն ձիուցը վեր ա գալիս, կթում ա, ամանը լցնում ու ձի ըլում, օգանգու տալիս ու ծոխ պես թռչում:

Դեռ մի օրավար հեռու ա ըլում, որ աղի թուր ու դալխանի չրխկոցն ու ձիու ոտնաձենը մոր անկաջն ա ընգնում: Ուշաբն ու տղի մերը հենց գիդենալիս են ըլում, թե տղեն էլ եդ գալու չի, սուփրա սարքած քեփ անելիս են ըլում:

Մերը որ լսում ա տղի ձիու ոտնաձենը. — Գլխիդ իլլաջ արա, որ տղես գալիս ա, — ասում ա: — Ի՞նչ ես ասում, տղիդ հենց տեղ եմ դրկել, որ հրեղեն Ջեյրանը նրա վենձ թիքեն անկաջն ա թողել հմի:

Քիչ են կենում, թե շատ, մըն էլ տենում են, որ տղեն բևաց: Ուշաբը տապ ա անում: Մերը տեղն ա մտնում ու սուտ տնքտնքում: Տղեն բերում ա Ջեյրանի կաթը, մերը խմում ա ու սղանում:

Էգսի օրը տղեն ֆորսատեղից եդ ա գալիս, տենում, որ մերը էլեդ հիվանդացել ա:

— Ի՞նչդ ա ցավում, մե՛րա, — հարցնում ա տղեն, — ի՞նչ դեղ ես ուզում, որ ճարեմ:

— Ո՞նց չի հիվանդանամ, — ասում ա մերը նեղացած, — քո նման իգիթ տղա ունենամ ու

գիդենամ ոչ, թե քու դվաթն ընչումն ա: Ասա՛, թե քու դվաթն ընչումն ա, ես կսաղանամ:

Տղեն ուզում ա մին մորը փորցել: Ասում ա. — Որ ձեռներս չվանով կապես, էլ կարալ չեմ բան անել:

— Դե՛ թող կապեմ կոներդ, տենում դրո՞ւստ ես ասում:

Մերը կապում ա չվանով տղի կոներն ու բարձրը ձենով կանչում. «Ո՛ւշաբ, դուրս արի, Ո՛ւշաբ, դուրս արի, Ո՛ւշաբ, դուրս արի»:

Տղեն որ տարթու ա տալիս, չվանը ձվիկ-ձվիկ ա ըլում:

— Մե՛րա, էդ ի՞նչ ես ասում, էդ ո՞ւմ ես կանչում, — ասում ա տղեն՝ նետուանեղը ձեռը կալած:

— Ոչումի չեմ կանչում, որդի՛, ես հիվանդ եմ, տաքութին ունիմ, դելն եմ տալիս: Ես սղանալու չեմ, հնչվելը դու ասես ոչ, թե քու դվաթն ընչումն ա:

Տղեն ասում ա. — Որ ձեռներս ճոպանսով կապես, էլ կարալ չեմ բան անել:

— Դե՛ թող կապեմ կոներդ, տենում դրո՞ւստ ես ասում:

Մերը կապում ա ճոպանով տղի կոները ու բարձր ձենով կանչում. «Ո՛ւշաբ, դուս արի, Ո՛ւշաբ, դուս արի, Ո՛ւշաբ, դուս արի»:

Տղեն որ տարթու ա տալիս, ճոպանը ձվիկ-ձվիկ ա ըլում:

— Մե՛րա, էդ ի՞նչ ես ասում, էդ ո՞ւմ ես կանչում, — ասում ա տղեն՝ նետուանեղը ձեռը կալած:

— Ոչումի չեմ կանչում, որդի՛, ես հիվանդ եմ, տաքութին ունիմ, դելն եմ տալիս: Ես սղանալու չեմ, հեչվելը դու ասես ոչ, թե քու դվաթն ընչումն ա:

Էս ասում ա մերն ու նվաղում, փելտիկ-փելտիկ ըլում:

Տղեն ասում ա. — Որ երկու, բիթս իրար հետ դնես ու նետուանդիս լարովը կապես, էլ կարալ չեմ բան անել:

— Դե թող կապեմ, տենում դրո՞ւստ ես ասում:

Մերը կապում ա նետուանդի լարով աղի բթերն ու բարձրը ձենով կանչում. «Ո՛ւշաբ, դուս արի, Ո՛ւշաբ, դուս արի, Ո՛ւշաբ, դուս արի»:

Տղեն որ տարթու ա տալիս, լարը բթերումը մեր ա մտնում: Մի դուռն ա բաց ըլում, գեղնի

տակից մի Ուշաբ ա դուս գալի, թուրը վրա ա բերում, որ տղի գլուխը տա, մերը թողում չի:

— Արի աչքերը հանենք ու տանինք դնենք մի ծովի ափին, որ ժամ գա թե չէ՝ ընգնի ծովի մեջը:

Տղեն միտն ա բերում Հյուրիմալաքի խոսքը, մատը կծում ա: Հմա ինչ՝ բանը բանից անց էր կացել: Նրա աչքերը հանում են. աջ աչքը դնում են ձախ ջեբումը, ձախ աչքը դնում են աջ ջեբումը, տանում դնում մի ծովի ափին, որ ժած գա թե չէ՝ ընգնի ծովի մեջը: Ու իրանք եղ են գալիս իրանց քոշկ ու սարահին:

Տղեն ձեռներն ածում ա, տենում, որ աղաքը ծով ա, եղ ա դառնում ու եղ գնում: Էս ծառին դիպչելով, էն քարի կպչելով գալիս ա, շատն ու քիչը աստոծ գիդե, հասնում ա մի վենձ մերու: Էդ մերու պոնգումը մի անմիական աղբիր ա ըլում: Նստում ա եղ աղբրի կշտին, սառը ջրիցը խմում, լիասիրտը «Ըխոյա՛» անում: Հենց էդ սհաթին երկու աղունիկ գալիս են ու նրա գլխի վերի կռանը մի հճարքու վրա վեր գալիս: Դրանցից մինը մերն ա ըլում, մեկելն՝ իրա ճուտը: — Ա՛խ, նանի, եղ խեղճ մարդը աչքեր չունի, ափսոս, աստոծ նրան ընչի՞ ա պատժել:

— Դա աչքեր ունի, որդի, դարդ մի՛ անել: Դրա աջ աչքը ձախ ջեբումն ա, ձախ աչքը աջ ջեբումն ա: Մենք որ թռչինք, երկու բմբուլ վեր կգձենք, թող նա աջ ջեբի աչքը ձախ աչքի տեղը դնի, ձախ ջեբի աչքը աջ աչքի տեղը դնե, վեր ունի բմբուլին, թրջե աղբրի ջրումն ու քսե աչքերին՝ աչքերը կաղանան:

Աղունակնին էս ասում են ու թռչում, իրանցից երկու բմբուլ վեր գձում տղի գլխին: Տղեն վեր ա ունում աչքերը, դնում իրանց տեղերը, բմբուլին անմիական աղբրի ջրումը թրջում ու քսում: Էն սհաթն նետ աչքերը սղանում են: Տղի դվաթն էլ եղ էկած ա ըլում, բթերը սղացած, աչքերն էլ առաջվանից լավացած: Նա ճամփա ա ընգնում դպա իր մոր ամարաթնին: Օխտն օրեն ճամփեն մի օրումն ա կտրում, հասնում տուն:

Դեռ մի օրավար հեռու ա ըլում, որ նրա ձին տիրոնջ ֆոտն առնում ա, սկսում ա խրխնջալ, ծուլիծուլ ըլիլ, ոտով գեղինը քանդել: Ձին որ տիրոնջ գլուխը տենում ա, ոսկոռնին խաղսն են ըլում: Տղեն հասնում ա տուն, ձիու ճկատիցը պաչում, մտնում ա իր օթախն ու պատիցը վեր բերում թոզակալած նետուանեղը: Ուշաբն ու մերը դուս են գալիս. ո՛ր տենում են տղին՝ թուր ու դալխանը կապած, նետուանեղն ուսովն ածած, ոտն օղանգվում՝ թուքներն ցմաքում ա:

Տղեն ասղանի պես վրա ա տալի, Ուշաբի գլուխը տալիս, դրմադրմա կտորում ու մի ֆորի մեջ ածում: Մոր աչքերը հանում ա, աջու աչքը դնում ձախ ջեբումը, ձախու աչքը դնում աջու ջեբումն ու տանում դնում մի ծովի ափի, որ ժած գա թե չէ՝ ծովն ընգնի: Ինքն էլ ձիուն օգանգու ա տալիս ու ճամփա ընգնում դպա Հյուրիմալաքի ամարաթը:

Նա իր գլխի անցվանքը չիմ պատմում ա, ուզում ա, որ ախչկա հետ պսակվի: Հմա ախչիկը չի ուզում:

— Ես ուզեի իգիթի հետ ապրել, նամարդի հետ գործ չունիմ: Դու որ քու մոր աչքերը քո ձեռովը հանել ես, դու կարալ չես ախչիկ սիրել. պետք ա գնաս օխտը տարի երգիր-երգիր ման գաս, աշուղություն անես, մեղքերդ լվանաս, որ ես քեզ ուզեմ:

— Դե լա՛վ, մի մատնուք տո՛ւ քու մատիցը, որ իմանամ դու ինձ մտիցդ չես գձելու,— ասում ա տղեն էրտասունքը աչքերումը:

Ախչիկը հանում ա իր մատիցը մի մատնուք ու տալիս ա նրան: Տղեն մատնուքը դնում ա իր մատը: Հանում ա իր թուր ու դալխանը, վեր ա դնում նետուանեղը, հանում իր շորերն ու հագնում մի ձնգլատորած ըղբատի շորեր, մի սազ ուսը գձում ու ընգնում աշխարաշխար: Ախչկան ասում ա, որ՝ թե վրա օխտը տարին էն օրվա օրը եղ գա՛ եղ գա, թե չէ՝ թո՛ղ ծնգնահաց տա, իմանա որ նա մեռած ա:

Տղեն սաղ աշխարքը ոտի տակն ա անում, էլ քաղաք չի թողնում. էլ գեղ չի թողնում, հեչվելը օխտը տարին թմամում ա: Ախչիկը ճամփա ա պիում, ճամփա պիում, աչքը ճամփին ջուր ա կտրում, իր նշանածը գալիս չի: Օխտը տարին թմամում ա, անց ա կենում մի օր, անց ա կենում վրա երկուսը, նշանածը կա ո՛չ ու կա ո՛չ: Ախչիկը ծնգնահաց ա հազիր անում, կանչում

ա իր միակի աղկատնուն, քոռերին, քաչալնուն: Վրա իրեք օրը սուփրեն բաց են անում, նստում: Հենց ողորմաթաս խմելու վախտը որ գալիս ա, տենում են տուն մտավ մի խեղճ անշլակտար աշուդ: Էն սհաթն և ետ նրան նստացնում են ու փլավ դնում ըղաքին: Նա փլավի կեսն ուտում ա ու մատիցը հանում ա իր նշանածի մատնուքը, դնում փլավի տակին ու տալիս ասչուն:

— Տարե՛ք, տվեք թգավորի ախչկանն ու ասեք, որ չիմ ուտե, միջին մի հատ բրինձ չի թողու: Ասչին տանում ա տալիս թգավորի ախչկանը, ասում ա, որ չիմ ուտե, միջին մի հատ բրինձ չի թողու:

Ախչիկն ուտում ա, ուտում, եք պրծնելու վրա ա ըլում, մին էլ տենում ա՝ մի բան ա պսպղում ամանումը: Վեր ա ունում, տենում իր մատնուքը: Էն սհաթն և ետ կանչել ա տալիս իրան կուշտը էդ դարիբ աշուդին: Եր աշուդին տենում ա՝ ճնանչում ա նրան ու ճտովն ընգնում: Խալիսը մնում ա բերանը բաց: Նոր իմացում ա տալիս, որ իր նշանածն եկել ա: Ծնդնահացը դառնում ա հրսանքահաց: Օխտն օր, օխտը գշեր հրսանիք են անում ու հասնում իրանց մուրազին:

Խերն ու բարաքաթն էստի, շառն ու շահմաթը անօրենի գլխին: